«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԱՊԶԲ-2018/16-7-3-ԵՊԲՀ»

ք. Երևան <<29>> << 05 >> 2018 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Պրոֆտեստ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա.Մարտիրոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **8995000 (ութ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	**«Պրոֆտեստ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 41 փող., թիվ 12/3**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ**
h/h 11500166513800	**Հ/Հ 220290123490000**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 00120301**
	էլ. հասցեն՝ PROFTESTLLC@gmail.com
	Հեռ. (055)900209
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«29» 05 *2018թ. կնքված*
«ԳՀԱՊՁԲ-2018/16-7-3-ԵՊԲՀ»
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
55	33141212	Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ 18 ONYX	Medtronic ԱՄՆ	ոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ 18: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ խտությունը՝ 18: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձը բաղկացած է էմոբիկ նյութից՝ կազմված EVOH (էթիլենացված սպիրտ)-ից, DMSO (դեմետիլ սուլֆոքսիդ)-ից և կասեցված մանրացված տանտալային փոշուց՝ հակադրություն ապահովելու համար ֆտորոսկոպիայի տակ արտացոլման համար: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձի հեղուկ իմվալիքային համակարգը բաղկացած է՝ 1.5 մլ շապիկից եւ երեք 1 մլ օնիքսից: Դեմետիլ սուլֆոքսիդը համատեղելի է և արտացոլվում է նրան տրված նեյրոնային ճառագայթման մեջ օգտագործվելիս: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձի 18 էթիլենացված սպիրտի պարունակությունը 6%:	հատ	750000	750000	1	ք. Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի 20 օրացույցային օրվա ընթացքում

				Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ 18-ը իր ցածր խտության շնորհիվ ավելի շատ է ճանապարհորդում և ավելի խորը ներթափանցելություն ունի: Վերջնական ամրությանը հասնում է 5 րոպեի ընթացքում:							
56	33141212	Պոլիէթիլենվինիլալկոհոլայ ին սոսինձ 34 ONYX	Medtronic ԱՄՆ	Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ 34: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ խտությունը՝ 34: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ բաղկացած է էմոբիկ նյութից, որն իր հերթին բաղկացած է EVOH (էթիլենացված սպիրտ)- ից լուծարված DMSO (դեմետիլ սուլֆոքսիդ) և կասեցված մանրացված տանտալային փոշի՝ հակադրությունը ապահովում ֆտորոսկոպիայի տակ արտացոլման համար: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձի հեղուկ իմվալիքային համակարգը բաղկացած է՝ 1.5 մլ շապիկ եւ երեք 1 մլ օնիքս: Դեմետիլ սուլֆոքսիդը համատեղելի է, որն էլ արտացոլվում է նրան տրված նեյրոնային ճառագայթման մեջ օգտագործվելիս: Պոլիէթիլենվինիլալկոհոլային սոսինձ 34-ի էթիլենացված սպիրտի պարունակությունը՝ 8%: Վերջնական ամրությանը հասնում է 5 րոպեի ընթացքում:	հատ	750000	750000	1	ք. Երևան, Հերացի 58 ն/կամ Մուրացա ն 114	1	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա ընթացքում
57	33141211	Միկրոխողովակ նյարդավիրաբուժական ECHELON	Medtronic ԱՄՆ	Մեկ լյումենային միկրոկաթետեր, նախատեսված ուղղորդիչ լարի միջոցով ներանոթային համակարգ մտնելու համար: Օգտագործվում է պերիֆերիկ և նեյրո էմբոլիզացիաների այլ գործողությունների իրականացման ժամանակ: Կաթետերի պրոքսիմալ մասը ունի՝ ստանդարտ ադապտեր՝ աբսեսուարների միացման	հատ			5	ք.Երևան, Հերացի 58 ն/կամ Մուրացա ն 114	5	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա ընթացքում

				համար, կիսակոշտ շաֆթ և անցում կատարի ճկուն դիստալ շաֆթ՝ կաթետերի տեղաշարժը թեթևացնելու համար: Դիստալ մասում առկա է երկու ռենտգենոկոնտրաստ մարկերներ: Հասանելի է 45 և 90 աստիճան թեքությամբ: Հաստությունը՝ 0.010": Երկարությունը 150սմ, ներքին տրամագիծը՝ 0.017սմ, արտաքին տրամագիծը՝ 2.1>1.7F:		275000	1375000				
58	33141136	Հոսքի ուղղորդված միկրոկաթետեր նյարդավիրաբուժական Marathon	Medtronic ԱՄՆ	Հոսքի ուղղորդված միկրոկաթետերը կիսաթափանցիկ է և բարձր ճկուն դալալային լիսեռով: Կաթետերի վերջնամասում առկա է ստանդարտ լուեր ադապտեր: Հոսքի ուղղորդված միկրոկաթետերը ունի ռադիոպակային մարկեր՝ հեռավորության վերջում, ֆլուորոսկոպիկ արտացոլման հեշտացման համար: Հոսքի ուղղորդված միկրոկաթետերի արտաքին մակերեսները ծածկված են ավելորդ քաշի չավելացման համար: Հոսքի ուղղորդված միկրոկաթետերը նախատեսված է ծայրամասային եւ նեյրոնային ճառագայթման համար: Միկրոկաթետերի ներարկման մաքսիմալ ճնշումը է՝690 ԿՊա: Հոսքի ուղղորդված միկրոկաթետերը միակողմանի կանխում է արյան շրջանառություն՝ կաթետերի տեղադրման ժամանակ: Նվազագույն ներքին տրամագիծն է՝ 0.053մմ-1.35մմ, օգտագործվող երկարությունը՝ 165սմ. երկարությունը՝ 25սմ:	հատ	235000	470000	2	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	2	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
59	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 2x4 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 2x4 չափսի - Ներզանցային անևրիզմաների,	հատ			1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան	1	2018 թվականին՝ միանվագ կամ

				արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 2մմ, երկարությունը՝ 4մմ:		375000	375000		Ն 114		փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
60	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 2x6 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 2x6 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 2մմ, երկարությունը՝ 6մմ:	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
61	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x4 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x4 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 3մմ,	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

				երկարությունը՝ 4մմ:							
62	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x6 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x6 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 3մմ, երկարությունը՝ 6մմ:	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
63	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x8 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x8 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 3մմ, երկարությունը՝ 8մմ:	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
64	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 4x8 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 4x8 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա

				առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 4մմ, երկարությունը՝ 8մմ:							ընթացքում
65	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 4x12 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 4x12 չափսի - Ներգանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 4մմ, երկարությունը՝ 12մմ:	հատ	375000	375000	1	բ.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
66	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 5x10 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 5x10 չափսի - Ներգանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 5մմ, երկարությունը՝ 10մմ:	հատ	375000	375000	1	բ.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
67	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 5x15 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 5x15 չափսի - Ներգանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար	հատ			1	բ.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացվ

				էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 5մմ, երկարությունը՝ 15մմ:		375000	375000				ած պահանջի՝ 20 օրացույցային և օրվա ընթացքում
68	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 6x15 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 6x15 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 6մմ, երկարությունը՝ 15մմ:	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային և օրվա ընթացքում
69	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 6x20 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 6x20 չափսի - Ներզանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 6մմ, երկարությունը՝ 20մմ:	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային և օրվա ընթացքում
70	33141211	Միկրոպարույր	Medtronic	Միկրոպարույր	հատ			1	ք.Երևան,	1	2018

		նյարդավիրաբուժական 8x20 AXIUM	ԱՄՆ	նյարդավիրաբուժական 8x20 չափսի - Ներգանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 8մմ, երկարությունը՝ 20մմ:		375000	375000		Հերացի 58 և/կամ Մուրացան 114		թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
71	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 9x20 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 9x20 չափսի - Ներգանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարույրի տրամագիծն է՝ 9մմ, երկարությունը՝ 20մմ:	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
72	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 10x20 AXIUM	Medtronic ԱՄՆ	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 10x20 չափսի - Ներգանգային անևրիզմաների, արթրովենոս մալֆորմացիաների էնդովասկուլյար էմբոլիզացիայի համար նախատեսված առանձնացվող միկրոպարույր: Պարույրի նյութը՝ պլատին: Պարույրի մեխանիկական անջատման հնարավորություն: Գերազանց առաձգականություն և փափկություն: Կառավարման և	հատ	375000	375000	1	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	1	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

				դիրքավորման բարձր ճկունություն: Միկրոպարոպրի տրամագիծն է՝ 10մմ, երկարությունը՝ 20մմ:							
100	33141211	Կապիլոտ պտտվող հեմոստատիկ փական Priority Pack with Copilot	ABBOTT Մեքսիկա	Կապիլոտ պտտվող հեմոստատիկ փականով՝ ներքին տրամագիծ 0.096 "(2.44 մմ), մուտքերի քանակը՝ 2, ճնշում մինչև 30 մթն սանդղակով, ինտրադյուսեր՝ ուղղորդիչ կաթետերի համար, հեմոստատիկ Y սեղմակով , 0.009"-0,018" ուղղորդչի ներթափանցման համար բութ ասեղ, ուղղորդչի դեկավարման հարմարանք, պլաստմասսե տորկեր՝ 0,009"-0,018" ուղղորդչին միացնելու համար:	հատ	20000	400000	20	ք.Երևան, Հերացի 58 և/կամ Մուրացան 114	20	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
Ընդամենը											**8995000**

1. Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:
2. Մույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:
3. Այն ապրանքատեսակների մասով, որոնց համար կիրառելի է պիտանելիության ժամկետ, անհրաժեշտ է, որ այդ ապրանքատեսակները մատակարարման պահին ունենան ապրանքի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 70 տոկոսը:
Առաջին փուլի մատակարարման ժամկետը, սահմանվում է 20-22 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրից:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
«Պրոֆտեստ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 41
փող., թիվ 12/3
Բանկ՝ «ԱկբաԿրեդիտ Ագրիկոլ բանկ»
ՓԲԸ
Հ/Հ 220290123490000
ՀՎՀՀ 00120301
էլ. հասցեն՝ PROFTESTLLC@gmail.com
Հեռ. (055)900209
Տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«29» 05 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-7-3-ԵՊԲՀ»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ոիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
55	33141212	Պոլիէթիլենվինիլալկոհոլայի և սոսինձ 18	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
56	33141212	Պոլիէթիլենվինիլալկոհոլայի և սոսինձ 34	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
57	33141211	Միկրոխողովակ նյարդավիրաբուժական	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
58	33141136	Հոսքի ուղղորդված միկրոկաթետեր նյարդավիրաբուժական	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
59	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 2x4	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

60	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 2x6	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
61	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x4	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
62	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x6	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
63	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 3x8	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
64	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 4x8	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
65	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 4x12	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
66	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 5x10	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
67	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 5x15	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
68	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 6x15	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

69	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 6x20	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
70	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 8x20	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
71	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 9x20	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
72	33141211	Միկրոպարույր նյարդավիրաբուժական 10x20	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
100	33141211	Կապիլոտ պտտվող հեմոստատիկ փական	-	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ուռճոդական կարգով ըստ մատակարարված քանակների:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
«Պրոֆտեստ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 41 փող., թիվ 12/3
Բանկ՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220290123490000
ՀՎՀՀ 00120301
էլ. հասցե՝ PROFTESTLLC@gmail.com
Հեռ. (055)900209
Տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ՊՐՈՖՏԵՍՏ» ՍՊԸ
"PROFTEST"
"PROFTEST"
00120301

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ___
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն
_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն
_____
ստորագրություն